Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2016 թ. հոկտեմբերի 6-ին կայացած թիվ 2 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 34-ը:

Օրակարգում՝

- Տեղեկատվություն հեռակա ուսուցման ասպիրանտուրայի մասին
- Տեղեկատվություն ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման նոր ծրագրի (2016-2021 թթ.) մասին
- Թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը
- Ընթացիկ հարցեր
- Շնորհավորանքներ Ռ.Մ.Հարությունյանին՝ հոբելյանի առթիվ

- **Տեղեկատվություն հեռակա ուսուցման ասպիրանտուրայի մասին**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանի հաղորդումը 2016-2017 ուս. տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի տեղերի վերաբերյալ. կենդանաբանություն՝ 2 տեղ, կենսաքիմիա՝ 2 տեղ, գենետիկա՝ 1 տեղ, սնկաբանություն՝ 1 տեղ :

- **Տեղեկատվություն ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման նոր ծրագրի (2016-2021 թթ.) մասին**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի համակարգող Ա.Ֆ.Կարապետյանի հաղորդումը կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման նոր ծրագրի (2016-2021 թթ.) մասին:

- **Թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Պարգև Արարատի Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Պարգև Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «A.Flavithermusi ամիլազային ակտիվությունը, ամիլազի անջատումը և բնութագրումը» Գ.00.07 «Միկրոբիոլոգիա»,
2. գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանին:

ԼՍԵՑԻՆ՝ կենդանաբանության ամբիոնի հայցորդ Վադիմ Վյաչեսլավի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենդանաբանության ամբիոնի վարիչ՝ դոցենտ Մ.Ս.Առաքելյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Վադիմ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հայաստանի որոշ ձեռքաթևավորների էկոլոգիական նիշերի տարբերակման մեխանիզմները» Գ.00.08 «Կենդանաբանություն» մասնագիտությամբ /բնագավառ՝ կեսաբանական գիտություններ/,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, Մ.Ս.Առաքելյանին:

ԼՍԵՑԻՆ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Էդուարդի Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Ռուզաննա Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Բազիդիալ մակրոմիցետները որպես շրջակա միջավայրի ծանր մետաղներով աղտոտվածության կենսացուցիչներ» Գ.00.17 «Սնկաբանություն» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ, պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, գիտաշխատող Մարգարիտա Անդրեյի Թորոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Մարգարիտա Թորոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հարթ քրոմոֆորով լիգանդների փոխազդեցությունը միա- և բազմաշղթա պոլինուկլեոտիդների հետ» Գ.00.02 «Կենսաֆիզիկա» մասնագիտությամբ,

2. գիտական ղեկավար հաստատել ֆիզ.-մաթ. գիտ.դոկտոր, պրոֆ. Ա.Թ.Կարապետյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի բիոինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտ՝ Հարություն Կարապետի Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Հարություն Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Կոլխիցինի և նրա անալոգների փոխազդեցությունը ինքնաբորբոքային ռեակցիաներում մասակցող սպիտակուցների հետ» Գ.00.016 «Կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., պրոֆ. Կ.Բ.Նազարյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի բիոինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտ՝ Գարրի Վաչագանի Չիլինգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գի-տական ղեկավարի հաստատման հարցը:
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Գարրի Չիլինգարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ցածրամոլեկուլյար լիգանդների փոխազդեցությունը G-քառաշղթա ԴՆԹ-ի հետ», Գ.00.016 «Կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., Հ.Ռ.Վարդապետյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական կենսաբանության ամբիոնի հայցորդ Մայա Էդուարդի Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ռ.Մ.Հարությունյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. հաստատել Մայա Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դյուշենի/Բեկկերի մկանային դիստրոֆիաների և ողնուղեղային մկանային ատրոֆիաների մոլեկուլային-գենետիկական ախտորոշումը Հայաստանում» Գ.00.15 «Գենետիկա» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., պրոֆ. Թ.Ֆ.Սարգսյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի ասպիրանտ Իսակ Միքայելի Յունանեսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ դոցենտ Ն.Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝
1. հաստատել Իսակ Յունանեսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Արաքս գետի հիդրոքաղաքականությունը և ազդեցությունը հարևան երկրների հարաբերությունների վրա», Գ.00.11 «Էկոկոգիա» մասնագիտությամբ,
2. գիտական ղեկավար հաստատել կ.գ.թ., Ն.Ա.Հովհաննիսյանին:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բարձր արդյունավետությամբ հատուկ գիտական, գիտատեխնիկական, գիտաինովացիոն կամ փորձակոնստրուկտորական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաների աջակցության մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի Կենդանաբանության լաբորատորիայի առաջարկած «Միջավայրի մարդածին աղտոտիչների և միկոտոքսինների ազդեցության պայմաններում օնտոգենեզի կայունության և բջջագենետիկական հոմեստազի գնահատումը (լճագորտի բնական պոպուլյացիաների և սպիտակ առնետի օրինակով)» նախագծի երաշխավորության հարցը /ղեկավար՝ Ա.Ֆ.Կարապետյան/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ նախագիծը մրցույթին մասնակցելու համար:

ԼՍԵՑԻՆ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆեսոր Ռուբեն Միքայելի Հարությունյանին ՀՀ Գիտության կոմիտեի բարձրագույն պարգևով պարգևատրելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս.Գևորգյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միջնորդել ՀՀ Գիտության պետական կոմիտեի առջև՝ Ռուբեն Միքայելի Հարությունյանին ՀՀ Գիտության պետական կոմիտեի բարձրագույն պարգևով պարգևատրելու համար:
Որոշումն ընդունվեց միաձայն :

- **Շնորհավորանքներ Ռ.Մ.Հարությունյանին՝ հոբելյանի առթիվ**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս.Գևորգյանը : Պրոֆեսոր Է.Ս.Գևորգյանը նշեց, որ ս.թ. սեպտեմբերի 23-ին լրանում է ԵՊՀ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ֆակուլտետում գործող «Կենսաբանություն՝ գ/հ ինստիտուտի լաբորատորիայի ղեկավար, ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռուբեն Միքայելի Հարությունյանի 70-ամյակը: Պրոֆեսոր Ռ.Մ.Հարությունյանը Հայաստանի լավագույն գիտնականներից է, միջազգային համբավ վայելող գիտնական, միջազգային գիտական ընկերությունների անդամ, գենետիկայի ոլորտում հանարապետությունում գիտական դպրոցի հիմնադիր: Պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը բազմիցս բարձր է պահել հայաստանյան գիտության վարկանիշը միջազգային գիտական ֆորումներում և, անշուշտ, արժանի է գնահատանքի :

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է .Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան